ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Բ

ՍԱԼՄԱՍ

ՍԱՄՎԵԼ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Բ

ՍԱԼՄԱՍՏ

ՀՏԴ 941(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3.(5Հ)+85.11(5Հ)
Կ294

Աշխատությունը «Հայաստանի պատմություն» 36-հատորյա գրքաշարի Բ հատորն է՝ նվիրված Պատմական Հայաստանի Պարսկահայք նահանգի Սալմաստ (Զարեհավան) գավառի պատմությանը և նյութական մշակույթի հուշարձաններին:

Հասցեագրվում է Հայաստանի պատմությամբ հետաքրքրվողներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
www.armenianarchitecture.am, www.armenianarchitecture.us, www.raa.am ✉ info@raa.am, raayer@sci.am

Կարապետյան Սամվել
Կ294 Սալմաստ / Ս. Կարապետյան: ՀՃՈՒ հիմնադրամ.-Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2017.-580 էջ:

ՀՏԴ 94(479.25):72(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)+85.11(5Հ)

ISBN 978-9939-843-34-6

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2017
© ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 2017

Սույն հատորը լույս ընծայվեց Հայրենիքին, ազգային պատմությանը և նյութական մշակույթի բյուրավոր հիշատակներին նախանձախնդիր
պ. Դանիել Սահակյանի մեկենասությամբ՝
ի հիշատակ պապի և հոր՝ Դանիել և Իսրայել Սահակյանների

Հատորի ստեղծման հովանավոր՝
ՀՀ Մշակույթի նախարարություն և
ՀՃՈՒ-ԱՄՆ մասնաճյուղ (նախագահ՝ Ժորա Մանուչարյան)

Իսրայել Դանիելի Սահակյան
(1895-1957)

Ես այս գրքի տպագրությունը նվիրում եմ հորս՝ Իսրայել Սահակյանի և պապիս՝ Դանիելի հիշատակին, այն պապի, որին երբեք չեմ ճանաչել, բայց որի անունն եմ կրում:

Սահակյանները սերում են Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող Սալմաստ գավառի Խոսրովա գյուղից: Մոտավորապես 1840 թ. այստեղ է ծնվել պապիս հայրը՝ Սահակը, որը հողագործ էր: Սահակն ու կինը, որի անունը մոռացության է մատնվել պատմության մշուշում, երեք որդի են ունեցել՝ Դանիելը (իմ պապը), Գաբրիելը և Աբրամը: Դանիելը Սահակի առաջնեկն էր (այսինքն՝ ընտանիքում առաջին Սահակյանը), ծնվել է մոտավորապես 1875 թ.: Եղբայրների հետ մեծացել է Խոսրովա գյուղում, որը հիմնականում բնակեցված էր ասորիներով: Այն Հաֆթվան գյուղից բաժանվում էր ընդամենը մի գետակով, որն էլ ամբողջովին հայաբնակ էր: Քանի որ քրիստոնեաբնակ այս գյուղերը գտնվում էին գերազանցապես մահմեդականներով բնակեցված շրջանում, այստեղ իրենց կենտրոններն էին հիմնել Եվրոպայից և Ամերիկայից եկած քրիստոնյա միսիոներները, ովքեր նաև դպրոցներ էին բացել շրջանի երեխաների համար: Այս, ինչպես նաև հայկական եկեղեցական դպրոցների շնորհիվ հայ և ասորի մանուկները գրաճանաչություն էին սովորում և կրթվում:

Դանիելի ընտանիքը Խոսրովայում զբաղվում էր հողագործությամբ, թեև շատ հավանական է, որ նրանք նաև առևտուր էին անում հարևան գյուղերի հետ (հետագայում սալմաստցիները հայտնի դարձան որպես առևտրականներ): Չափահաս դառնալուց հետո Դանիելն ամուսնանում է Հռիփսիմեի հետ, և նրանք հինգ երեխա են ունենում՝ Սամարիա, Իսրայել, Ջիբրայել, Միքայել և Սիրանուշ: Իսրայելը՝ իմ հայրը, ծնվել է 1895 թ.:

Մոտավորապես 1910 թ. Դանիելի ավագ քույրը՝ Սամարիան, ամուսնանում է Հովասափի հետ, որը Սալմաստից էր, բայց ապրում էր Բաքվում: Նավթային գործն արդեն սկսել էր վերելք ապրել՝ բազմաթիվ մարդկանց ապահովելով աշխատատեղերով: Սամարիան նույնպես տեղափոխվում է Բաքու, որ ամուսնու կողքին լինի: Մի քանի տարի անց՝ մոտավորապես 1912 թ., աշխույժ եռուզեռի մեջ գտնվող քաղաքում աշխատանք գտնելու նպատակով Իսրայելը հետևում է քրոջը և տեղավորվում երկաթուղում որպես ատաղձագործ:

Առաջին աշխարհամարտի ժամանակ (1914 թ.), երբ թուրք զինվորներն ու քրդերը Սալմաստ գավառում կռվում էին ռուսների դեմ, Դանիելը Հռիփսիմեին և մնացած երեք երեխաներին ուղարկում է վտանգից հեռու՝ Բաքու՝ Սամարիայի, Հովասափի և Իսրայելի մոտ: Այնտեղ Հռիփսիմեն և նրա երեք որդիները երկաթուղային կայարանին կից նպարեղենի և լայն սպառման ապրանքների խանութ են բացում և աստիճանաբար սկսում են հաջողությունների հասնել: Մի փոքր ավելի ուշ Ջիբրայելը Բաքվից գնում է Կրասնոդար (Ռուսաստան), որտեղ սալմաստցի շատ հայ ընտանիքներ էին բնակություն հաստատել՝ փորձելով խույս տալ իրենց անորոշ ճակատագրից: Նրանց մեջ էր նաև իմ մորական պապը՝ Ավետիքը, որը փոխադրումներով զբաղվող մի ընկերություն էր հիմնել այնտեղ:

Կնոջս մայրը՝ Աննա Խալաթյանը, որի ընտանիքը նույնպես սերում էր Սալմաստից, հիշում էր. մանկության տարիներին մի անգամ հայրը տարել էր՝ իսկական հայկական հարսանիք տեսնելու: Իրականում նա ներկա է գտնվել իմ հորեղբոր՝ Ջիբրայելի և Սաթենիկի հարսանիքին: Սա բնորոշ է սալմաստցիներին. մենք փորձում էինք միշտ միասին լինել, ուր էլ որ հայտնվեինք:

Առաջին աշխարհամարտի ժամանակ Սալմաստ գավառն ամբողջովին իրար էր խառնվել: Այստեղ միաժամանակ գործում էին օսմանյան բանակը, քուրդ կողոպտիչները, հայկական միլիցիան և ռուսական զորքերը: Իրանական պետությունը միայն փոքր մասով էր կարողանում վերահսկել իրավիճակը, և գավառի գյուղերն ու այլ տարածքներ շարունակ հայտնվում էին այս կամ այն ուժի տիրապետության տակ, ինչի հետևանքով բազմաթիվ մարդկային զոհեր եղան: Շատ ընտանիքներ ուղղակի փախան այնտեղից, բայց առհասարակ տղամարդիկ կանանց և

երեխաներին ուղարկում էին ապահով վայրեր, իսկ իրենք մնում էին՝ պաշտպանելու այն, ինչ իրենց էր պատկանում:

Ես դեռ հիշում եմ այն պատմությունները, որ Խոսրովայի ագարակում լսել եմ իմ մեծ հորեղբայր Գաբրիելից (Դանիել պապի եղբայրն էր)՝ նրա ոտքերի մոտ նստած: Նա պատմում էր, թե ինչպես էին քուրդ ավազակներն ահաբեկում իրենց ողջ գյուղը, ինչպես էին հայ տղամարդիկ, զենքը ձեռքին, ցատկում ձիերի վրա և սլանում՝ վրեժ լուծելու իրենց կորցրած եղբայրների համար:

Շատ հայտնի է հատկապես այդ դեպքերից մեկը. 1918 թ. մարտին Սիմկո անունով մի քուրդ ավազակ դավադրաբար իր ծուղակն էր գցել ասորիների հոգևոր առաջնորդին՝ Մար Շիմոնին: Ասորիները որոշում են վրեժ լուծել քրդական այն գյուղից, որտեղ Սիմկոն լարել էր թակարդը, և Գաբրիելն ու Աբրամը, ովքեր շատ մտերիմ էին իրենց գյուղի ասորիների հետ, միանում են նրանց:

Մինչև 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունը ռուսական կանոնավոր զորաբանակները, որոնք գործում էին Սալմաստի և Ուրմիայի շրջաններում, շրջապատման մեջ էին պահում Օսմանյան կայսրության արևելյան սահմանները, որպեսզի թուրքերը չկարողանան հասնել Բաքվի հարուստ նավթահանքերին: Հեղափոխությունից հետո ռուսական զորքերն ամբողջությամբ հետ են քաշվում, որի հետևանքով շրջանի՝ հիմնականում քրիստոնյաներով բնակեցված գյուղերը, որոնք կռվել էին ռուսների հետ կողք կողքի, մնում են մենակ թուրքական հարձակման վտանգի առջև:

1918 թ. ամռանը Օսմանյան կայսրության զորքերը, որոնք այլևս ստիպված չէին դիմակայելու ռուսական կանոնավոր բանակին, հարձակվում են Իրանի արևելյան սահմանների մոտ գտնվող բնակավայրերի վրա: Այս հարձակման թիրախում էին նաև հյուսիսարևմտյան տարածքները: Առաջինն ընկնում է Խոյը, ապա Սալմաստն ու Ուրմիան: Քանի որ Սալմաստը Խոյի և Ուրմիայի միջև է գտնվում, շատ հնարավոր է՝ հենց այդ ժամանակ էր, որ Դանիելն ու Գաբրիելը միանում են այն տասնյակ հազարավոր հայ և ասորի գաղթականներին, ովքեր Խոյից ու Սալմաստից սկսում են փախչել դեպի հարավ՝ դեպի Ուրմիա: Վերջինիս գրավումից հետո նրանք փորձում են ապաստանել Ուրմիայից հարավ և արևմուտք՝ Բաղդադի մոտ գտնվող շրջաններում, որտեղ, ինչպես իրենք էին լսել, գործում էր բրիտանական բանակը:

Անշուշտ, այդ ժամանակ բրիտանացիները փորձում էին հայերից և ասորիներից կազմված զորամիավորումներ ստեղծել՝ հուսալով, որ դրանք կփոխարինեն հեղափոխության պատճառով ասպարեզը լքած ռուսական բանակին: Բրիտանացիներն Ուրմիայից փախչող գաղթականներին ապահով հասցնում են Բաղդադից մոտ 40 կմ հյուսիս-արևելք գտնվող Բաքուբա և տեղավորում հատուկ ճամբարում: Նրանց քարավանը ձգվում էր ավելի քան 15 մղոն, և բրիտանական փոքրաթիվ ուժերը պարզապես ի զորու չէին պաշտպանելու բոլորին: Հայտնի է, որ Ուրմիայի շրջանից փախչող 85.000 գաղթականներից միայն 50.000-ին է հաջողվում հասնել Բաքուբա: Մենք գիտենք, որ Դանիելն ու Գաբրիելն ասորի և հայ այն գաղթականների հետ էին, որոնք փախչում էին դեպի հարավ-արևմուտք Բաքուբա/Բաղդադ տանող ճանապարհով: Ես վստահ չեմ, բայց ըստ իմ տեղեկությունների՝ Դանիելը կորել է (ամենայն հավանականությամբ սպանվել է) հենց այդ ժամանակ և հենց այդ ճանապարհին, երբ գաղթականների քարավանի վրա են հարձակվել քուրդ կողոպտիչները:

Բաքուբայում Գաբրիելն անդամագրվում է բրիտանական բանակի նոր կազմավորված զորամիավորումներից մեկին, որի մի մասը հետագայում հայտնի դարձավ Դանստերֆորս անունով: Ընդամենը մի քանի ամիս հետո, երբ պատերազմը վերջանում է, նա անմիջապես վայր է դնում զենքը և նետվում Եփրատ գետը՝ դեպի ազատություն: Վերադառնում է Սալմաստ, որտեղ կարողանում է հետ բերել ընտանիքին պատկանող հողերը և սկսում զբաղվել դրանց մշակությամբ:

Երբ ես 10-15 տարեկան երեխա էի, մեր ընտանիքը երբեմն այցելում էր Գաբրիելին և նրա կնոջը՝ Մաշինկային Սալմաստում գտնվող նրանց ագարակում: Մեկ շաբաթ այնտեղ անցկացնելուց հետո մենք բոլորս գնում էինք Ուրմիա լիճ, վրան խփում ափին և լողում նրա չափազանց աղի ջրերում:

Դանիելի կինը՝ Հռիփսիմեն, և երեխաները մնում են Բաքվում: Ապրում էին իրենց խանութի վերևում գտնվող բնակարանում: Անորոշության այդ ժամանակներում կարողանում են մի փոքր հաջողության հասնել: Նրանք 1917 թ. բոլշևիկյան հեղափոխության ականատեսներից էին, բայց քանի որ Իրանի քաղաքացիներ էին, Ռուսաստանում մոլեգնող փոփոխությունները նրանց վրա շատ չեն անդրադառնում: Ռուս հասարակությունը քառասային հեղաշրջման միջով է անցնում, իշխող դասակարգը տապալվում է, շատերն են զոհվում, բայց Կովկասում գտնվող գաղթականները սրանից հիմնականում չեն տուժում:

Մոտավորապես 1928 թ. խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ գաղթականները կա՛մ պետք է դառնան Խորհրդային Միության քաղաքացիներ, կա՛մ վերադառնան իրենց երկրները: Սահակյան ընտանիքը որոշում է ետ դառնալ Իրան, բայց քանի որ նրանք արդեն սովորել էին քաղաքային կյանքին և գործերին, հաստատվում են Թավրիզում (սա շատ հին պարսկական քաղաք է՝ Սալմաստի շրջանից ոչ հեռու):

Սահակյանների առաջին գործը չամիչի արտահանումն էր (չամիչը նավով Եվրոպա հասցնելու համար նաև փայտե տուփեր էին պատրաստում): Շատ ժամանակ չանցած՝ 1930-ական թթ. վերջերին, Ջիբրայելը մեկնում է Գերմանիա, որ արտահանվող ապրանքն անձամբ հասցնի շուկա: Արդյունաբերական հեղափոխության ականատեսը դառնալով՝ նա ամբողջովին բացահայտում է դրա ծավալն ու ընդգրկումը: Գործարաններում հետևում է արտադրական գործընթացի ավտոմատացմանը: Ջիբրայելը Թավրիզ է վերադառնում գիտելիքներով հարստացած, և Սահակյանները սկսում են մասնակցել Իրանի արդյունաբերության զարգացման գործընթացին: Համագործակցելով հայ ընտանիքների հետ՝ միացյալ ուժերով ստեղծում են Թավրիզի ալյուրի, օճառի և գարեջրի գործարանները:

Երբ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ խորհրդային բանակը գրավում է Իրանի հյուսիսային մասը (ներառյալ Թավրիզը), բրիտանական և ամերիկյան զորքերն էլ

իրենց հերթին գրավում են Թեհրանը և նրանից հարավ ընկած հատվածները՝ խորհրդային ռազմաճակատին զենք մատակարարելու Պարսից ծոցից (մասամբ էլ որպեսզի համոզված լինեն, որ խորհրդային բանակն այնտեղ չի հասնի): Վախենալով, որ կոմունիստ ռուսները երբեք չեն հեռանա, Սահակյան եղբայրներն իրենց ընտանիքների հետ Թավրիզից հասնում են Թեհրան և նոր, ավելի մեծ գործարաններ հիմնում թավրիզյան գործընկերների հետ միասին: Նշեմ, որ մորս ընտանիքը 1928 թ.-ից ի վեր ևս հաստատվել էր Թեհրանում (նրանք, ինչպես և մեր ընտանիքը, դուրս էին եկել Ռուսաստանից):

Թեհրանում Սահակյանները կառուցում են սառույցի և գարեջրի ամենամեծ գործարանները: Միջին Արևելքում ապակե տարաների ամենամեծ արտադրությունը ևս պատկանում էր նրանց: Իրանի տարածքում ոչ ալկոհոլային խմիչքներ (Coca Cola Canada-Dry և 7-up) էին շշալցվում նրանց յոթ գործարաններում:

Սահակյան 3 եղբայրներից (Իսրայել, Ջիբրայել և Միքայել) յուրաքանչյուրն ուներ երեք երեխա. Իսրայել – եղբայրս՝ Հենրին, քույրս՝ Անահիտը և ես; Ջիբրայել – Սեդա, Լեո և Էդուարդ; Միքայել – Ռոբերտ, Ռաֆիկ և Քրիստոֆեր: Նրանց բոլոր յոթ որդիներն էլ ի վերջո ինչ-որ կերպ ներգրավվում են ընտանեկան գործերի մեջ: Մինչև 1970-ական թթ. վերջը նրանց ընտանեկան ձեռնարկություններում ամբողջ Իրանի տարածքում աշխատողների թիվը հասնում էր մի քանի հազարի:

1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո մեր՝ արդեն բավականին մեծ ընտանիքը փախչում է երկրից՝ սփռվելով Եվրոպայում և Միացյալ Նահանգներում: Ձեռնարկությունները բռնագրավվում են, և ընտանիքի անդամները կորցնում են նաև իրենց անձնական ունեցվածքի մի մասը: Մեծապես տուժում է նաև Թեհրանի աշխույժ հայ համայնքը:

1980 թ. ես հաստատվեցի ԱՄՆ Փենսիլվանիայի կենտրոնում կնոջս՝ Միլայի հետ: Մենք այստեղ մեծացրինք մեր երեխաներին և այժմ էլ երկու թոռնիկ ունենք, որոնք մեզ մոտ են ապրում: Նրանցից մեկը Դանիելն է. կրում է իմ անունը, այն անունը, որը հայրս է տվել ինձ, որ միշտ հիշի Սալմաստից Բաղդադ տանող ճանապարհին անհետ կորած իր հորը՝ իմ պապին:

Կցանկանայի խորին շնորհակալություն հայտնել Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի աշխատակիցներին, որոնց ջանքերի և անխոնջ ուսումնասիրության արդյունքն է այս գիրքը: Հուսով եմ, որ այսպես մենք կարող ենք անմար պահել մեր պատմական հիշողությունը, որպեսզի մի օր իմ թոռները, ինչպես նաև սալմաստցի հայերի բոլոր ժառանգներն ավելի լավ ճանաչեն իրենց արմատները:

Հեղինակի կողմից

Պարզ ճշմարտություն է, որ յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտականությունն է ճանաչել հայրենի օրրանը և ուսումնասիրել բազում դարերի ընթացքում Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Գաղտնիք չէ, որ որևէ արժեքի, այդ թվում՝ Հայրենիքի նկատմամբ սերը բխում է ճանաչողությունից, և որքան խորն է այն, այնքան ավելի զորեղ են նվիրումի զգացումները:

Առաջնորդվելով ճիշտ այս համոզումով և արդեն տասնամյակներ գործելով ի շահ սրբազան Հայրենիքի նկատմամբ ճանաչողության ավելացման՝ մեր հիմնադրամի ջանքերով ցարդ ստեղծվել և հրատարակվել են մի շարք աշխատություններ:

Վերջիններիս թվում կարևորագույն հանգրվան է 2015 թ. ստեղծված «Հայաստանի պատմություն» գրքաշարը, որի նպատակն է գավառ առ գավառ և յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ ներկայացնել հայոց Հայրենիքը:

Սկսելով Հայկ Նահապետի ոստան Հայոց ձոր գավառից՝ որպես սույն գրքաշարի Ա հատոր, այժմ արդեն իրականություն է Բ հատորը՝ նվիրված Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի՝ միմյանց կից Զարեհավան և Առնա գավառներին, որոնք միասին արդեն զարգացած միջնադարից մինչև մեր օրերն առավելապես հայտնի են մեկ ընդհանուր՝ Սալմաստ անվամբ:

Իհարկե, շնորհիվ արդեն ավելի քան մեկ դար առաջ վաստակաշատ Արշակ Աթայանի հեղինակած «Սալմաստ» աշխատության (Նոր Ջուղա, 1906), ինչպես նաև այլ հեղինակների գրչին պատկանող և տարբեր ժամանակներում լույս ընծայված բազմաթիվ, թեկուզ նյութի ավելի հպանցիկ շոշափմամբ աշխատությունների և մանավանդ մեծաթիվ հոդվածների՝ ընթերցողն ինչ-որ չափով հնարավորություն է ունեցել որոշակի պատկերացում կազմելու գավառի պատմության, ազգագրության, ժողովրդագրության, նաև պատմական հուշարձանների մասին: Սակայն հարկ էր այդ ամենն ի մի բերել, լրացնել դիվանական և գրադարանային պրպտումների, ինչպես նաև դաշտային առավել ընդգրկուն և հիմնավոր հետազոտությունների շնորհիվ ձեռք բերված տվյալներով և համալիր ուսումնասիրությամբ ստեղծել գավառի պատմական անցյալն ու նյութական մշակույթի հուշարձաններն առավել ամբողջական ներկայացնող մի աշխատություն:

Հատորը ստեղծվել է դեռևս 1980-ական թթ. սկզբներից ցարդ անընդմեջ կատարված գրավոր նյութերի (անտիպ և տպագրված, հայերեն և օտարալեզու) հավաքագրման և մշակման, ինչպես նաև 2011, 2016 և 2017 թթ. իրականացված գիտարշավների ընթացքում ձեռք բերված հարուստ տվյալների համալիր ուսումնասիրության շնորհիվ:

Հուսով ենք, որ զանազան խնդիրների լուսաբանմամբ սույն հատորը կօգնի բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են Սալմաստ գավառի պատմական անցյալով և ցարդ պահպանված նյութական մշակույթի հուշարձաններով:

Այս ամենով հանդերձ՝ հարկ եմ համարում նշել, որ չնայած գավառի պատմությունը վեր հանելուն միտված մեր տևական ջանքերին, այնուամենայնիվ, այս աշխատությունը երբեք հանրության սեփականությունը չէր դառնա, եթե չլիներ մեր աշխատանքի նկատմամբ վստահությամբ մոտեցած և տպագրության ողջ հոգսը պատվով ստանձնած արմատներով Սալմաստ գավառի Խոսրովա գյուղից սերող հարգարժան Դանիել Սահակյանը, որին էլ, օգտվելով առիթից, հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Շնորհակալական զգացումներով խոսք ենք հղում նաև ՀՀ Մշակույթի նախարարությանը և ի դեմս պ. Ժորա Մանուչարյանի՝ ՀԵՌՈՒ-ԱՄՆ մասնաճյուղին, ովքեր սատարեցին հատորի ստեղծման նախահրատարակչական աշխատանքները:

Բովանդակություն

Խոսք պ. Դանիել Սահակյանի 4
Հեղինակի կողմից 7
Բովանդակություն 8
ՆԱԽԱԲԱՆ 9
Անվանում 9
Աշխարհագրական միջավայրը 9
Գետային ցանցն ու ջրային պաշարները 10
Բուսական աշխարհը 12
Կենդանական աշխարհը 12
Հաղորդակցության ուղիները 13
Բնական աղետներ 13
Պատմություն 15
Սալմաստի հայերի գաղթը դեպի ռուսանվաճ երկրամասեր 18
Քաղաքական կացության սրացումը 1890-ական թթ. կեսերին 19
Ներհայկական կուսակցական խժդժությունների բացասական հետևանքները 20
Տեղական իշխանությունների ձեռնարկած քայլերը գավառը հայ հեղափոխականներից մաքրելու ուղղությամբ 21
1890-ական թթ. վերջերին Սալմաստից ծայր առած արտագաղթը 22
Կացությունը 1901-1904 թթ. 23
Կացությունը 1905-1907 թթ. 25
1908 թ. դեպքերը և Պարսկաստանի սահմանադրական կռիվները 26
Դեպքերի զարգացումները 1909 թ. 31
Դեպքերի զարգացումները մինչև Առաջին աշխարհամարտը 32
Ռուսները փոխարինում են թուրքերին. ռուս-քրդական համագործակցության արդյունքը՝ խուզարկություններ հայաբնակ գյուղերում. նոր խստություններ և վտանգներ 32
Սալմաստն Առաջին աշխարհամարտի ընթացքում 33
Թուրքերի փետրվարյան նահանջն ու դրան նախորդած ոճիրները 35
Բնավեր սալմաստցիների գոյապայքարը և նրանց օգնելու համար համերկրացիների գործադրած ջանքերը 36
Գաղթականների վերադարձը Սալմաստ 37
Սալմաստցիների ապրիլյան կոտորածը 38
Դիլմանի հաղթությունն ու Սալմաստի վերագրավումը 38
Սալմաստցիների գաղթն ու վերադարձը 42
Վանի հուլիսյան՝ ռուսական առաջին դավաղիր նահանջը և նրա հետևանքները Սալմաստում 42
Կացությունը 1916 թ. 44
Կացությունը 1917 թ. 46
Կացությունը 1918 թ. 48
Կացությունը 1919 թ. և խաղաղ կյանքին վերադառնալու նախադրյալները 53
Վարչական կացությունը 55
Բնակչություն 55
Գավառաբնակ այլ ազգություններ 66
Տնտեսություն 67
Կրթություն 70
Կենտրոնական (գյուղատնտեսական-արհեստագիտական) վարժարան բացելու անհաջող փորձը 73
Կրթական գործը 1899-1903 թթ. 75
Կրթական գործը 1904-1908 թթ. 76
Կրթական գործը 1909-1914 թթ. 78
Կրթական գործը պատերազմի տարիներին (1914-1918 թթ.) 80
Կրթական գործը 1920-1960-ական թթ. 81
Գրադարաններ 81
Առողջապահություն 81
Ատրպատականի առաջնորդներն ու Սալմաստի փոխանորդությունը 83
Պատմական հուշարձաններ 89
ԱԽՏԱԽԱՆԱ 92
ԱՂԻՍՍԱՅԻԼ 101
ԱՅԱՆ 103
ԱՋՎԱՋ 106
ԱՍԼԱՆԻԿ 115
ԳՅՈՒԼԻԶԱՆ 117
ԴԵՐԻԿ 121
ԴՐԻՇԿ 138
ԶԵՎԱՋՈՒԿ 143
ԹԵՄԵՐ 146
ԽԱՆԹԱԽՏ 150
ԽՈՍՐՈՎԱ 151
ՀԱԽՎԵՐԱՆ 181
ՀԱՎԹՎԱՆ 183
ՀԱՎԴՈՒՌ (ՀՈՎԴԱՐ) 296
ՀՄԲԱՆԱՎԱ 300
ՂԱԼԱՍԱՐ 302
ՂԶԼՋԱ 322
ՃԱՐԱ 331
ՄԱՀԼԱՄ 337
ՄԻՆԱՍ 395
ՄՈՒՂԱՆՋՈՒԿ 400
ՆԱԶԱՐԱԲԱԴ 402
ՇԵՅԹԱՆԱՎԱ 404
ՇԻԴԱՆ 406
ՌԱՇԿԻՐԱՆ 407
ՌԿԱՎԱ 408
ՍԱԼՄԱՍՏ (ԴԻԼՄԱՆ, ՇԱՀՓՈՒՐ) 409
ՍԱՌՆԱ 418
ՍԱՎՐԱ 430
ՍԱՐԱՄԵՐԻԿ 446
ՎԱՐԴԱՆ 451
ՈՒԼԱ 454
ՓԱԹԱՎՈՒՐ 457
ՓԱՅԱՋՈՒԿ 463
ՔԱՊԻԿ 511
ՔՅԱԼԱՇԱՆ 512
ՔՅՈՀՆԱՇԵՀԻՐ (ՀԻՆ ՔԱՂԱՔ) 515
ՔՅՈՉԱՄԻՇ 537
Սալմաստ գավառի պատմական հուշարձանների ցանկ 539
Օգտագործված գրականության ցանկ 543
Անձնանունների ցանկ 551
Տեղանունների ցանկ 570
Առարկայական ցանկ 575

Գրքաշարի նպատակն է Հայաստանի պատմությունը ներկայացնել գավառ առ գավառ, յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ:

Հատորներից յուրաքանչյուրը նվիրված է լինելու Պատմական Հայաստանի (Մեծ և Փոքր Հայքերի) մեկ կամ մի քանի գավառներին և ներկայացնելու է տվյալ գավառի բոլոր բնակավայրերի պատմությունը և պատմական հուշարձանները:

Գրքաշարի յուրաքանչյուր հատոր պարունակելու է շուրջ 1000 լուսանկար, տարաբնույթ քարտեզներ, չափագրություններ, գրչանկարներ և օժանդակ այլ նյութեր:

Գրքաշարը խորհրդանշականորեն սկսում է Հայոց ծոր գավառից (հատոր Ա), քանի որ մեր ազգի անվանադիր Հայկ Նահապետը հաղթական ճակատամարտից հետո հենց այստեղ է հիմնում Հայք դաստակերտը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԵՐԵՎԱՆ - 2017

www.armenianarchitecture.am
www.raa.am
raayer@sci.am